ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

ԵՐՋԷԿ
YTPC

"YEREVAN TPC" CJSC

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

www.ytpc.am +374 11 472 760 | +374 11 472 771 mailbox@ytpc.am

N° 1

17 01 2024թ./y.

ՈՐՈՇՈՒՄ

«ՀՈՎԻԿ ՄՈՒԿՈՒՉԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ» ՖԻԶԻԿԱԿԱԿԱՆ ԱՆՁԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 88-րդ հոդվածի պահանջներով՝

Պ Ա Ր Զ Վ Ե Ց

<u>Գործի նախապատմությունը.</u>

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 2023թ. նոյեմբերի 30-ին ավտոմեքենաների տեխնիկական վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-23/68» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ)՝ 12 (տասներկու) չափաբաժիններով, որն իրականացվել է armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

Ընթացակարգի 12-րդ (տասներկուերրորդ) չափաբաժնի համար մասնակցության հայտ է ներկայացրել Ֆ/Ա «Հովիկ Մուկուչի Մարգարյանը» (այսուհետ՝ Մասնակից): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից 2023 թվականի դեկտեմբերի 12-ին տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստում

որոշվել է 12-րդ չափաբաժնի մասով որպես ընտրված մասնակից ճանաչել և հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել Ֆ/Ա «Հովիկ Մուկուչի Մարգարյանին»:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 2-րդ մասով և 10-րդ հոդվածով՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը, Պատվիրատուն ծանուցել է ընտրված Մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Մասնակցին տրվել է հինգ աշխատանքային օր ժամկետ՝ վերջինիս կողմից հաստատված պայմանագիրը և որակավորման, պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված տուժանքի ձևով ներկայացնելու համար, սակայն վերջինիս կողմից հաստատված պայմանագիրը տուժանքների հետ միասին չեն ներկայացվել: Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, ուստի Հանձնաժողովը 2024թ. հունվարի 10-ին տեղի ունեցած նիստում որոշում է կայացրել մերժել Մասնակցի կողմից ներկայացված հայտը և Ընթացակարգի 12-րդ չափաբաժինը, որի մասով Ֆ/Ա «Հովիկ Մուկուչի Մարգարյանը» եղել է ընտրված մասնակից, հայտարարվել է չկայացած:

<u>Գործի քննության իրավական հիմքերը.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով

սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Որոշում եմ

1. Ֆ/Ա «Հովիկ Մուկուչի Մարգարյանին» ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:

2. Որոշումը տրամադրվում է լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված ժամկետում և կարող է բողոքարկվել դատական կարգով:

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ-ի
Գլխավոր տնօրենի ժ/պ՝

Ա. Ղազարյան

ք. Երևան